Վարդավառի ծեսին կատարվող երգեր, պարերգեր

Վարդավառ է, Վարդավառ է

Վարդավառ է, Վարդավառ է,
Երկինքը արեգական է,
Վարդավառ է, Վարդավառ է,
Արևը կամար կապել է,
Ջա՛ն, Վարդավառ, ջա՛ն, Վարդավառ,
Ոսկի բլբուլն է վարդին թառ:

Արև բացվեց թուխ ամպերեն,
Կաքավ թռավ կանաչ սարեն,
Կանաչ սարեն, սարի ծերեն,
Բարև բերավ ծաղիկներեն:

Վարդավառ է, Վարդավառ է,
Երկինքը արեգական է,
Վարդավառ է, Վարդավառ է,
Արևը կամար կապել է,
Ջա՛ն, Վարդավառ, ջա՛ն, Վարդավառ,
Ոսկի բլբուլն է վարդին թառ:

Սոնա յար

Սոնա յար, Սոնա յար,
Սոնա սիրուն, Սոնա յար:
Սոնա յար, Սոնա յար,
Սոնա սիրուն, Սոնա յար:

Վարդավառը գալիս ա,
Սոնա յար, Սոնա յար,
Ծաղիկը ցընծալիս ա.
Սոնա սիրուն, Սոնա յար:

Այ ծաղիկ կանչող աղջիկ,
Սոնա յար, Սոնա յար,
Ձենըդ ծըլվըլալիս ա,
Սոնա սիրուն, Սոնա յար:

Կանաչ տեղը՝ բաղում եմ,
Սոնա յար, Սոնա յար,
Պարի միջին խաղում եմ,
Սոնա սիրուն, Սոնա յար:

Կաքավի պես սորալով,
Սոնա յար, Սոնա յար,
Տըղաներին դաղում եմ,
Սոնա սիրուն, Սոնա յար:

Սոնա յար, Սոնա յար,
Սոնա սիրուն, Սոնա յար:
Սոնա յար, Սոնա յար,
Սոնա սիրուն, Սոնա յար:

Լուսամուտին կարմիր խնձոր շարել եմ

Վարդավառը գալիս ա,
Լուսամուտին կարմիր խնձոր շարել եմ
Ծաղիկը ցնծալիս ա,
Տո՛, շան տղա քեզնից լավին ճարել եմ, ճարել եմ:

Վարդ եմ քաղել մաղերով,
Լուսամուտին կարմիր խնձոր շարել եմ
Վեր եմ դրել շաղերով,
Տո՛, շան տղա քեզնից լավին ճարել եմ, ճարել եմ:

Խնձոր ես ծառի վրա,
Լուսամուտին կարմիր խնձոր շարել եմ
Ծաղիկ ես սարի վրա,
Տո՛, շան տղա քեզնից լավին ճարել եմ, ճարել եմ:

Ծառի կանաչ տերևը,
Լուսամուտին կարմիր խնձոր շարել եմ
Յարիս թել, թել մազերը,
Տո՛, շան տղա քեզնից լավին ճարել եմ, ճարել եմ:

Կապուտ էր մանուշակը,
Լուսամուտին կարմիր խնձոր շարել եմ

Բուսել է քարի տակը,
Տո՛, շան տղա քեզնից լավին ճարել եմ, ճարել եմ:

Պուպլատիկինն էկեր է

Պուպլատիկինն էկեր է, ու՛յ, ու՛յ, ու՛յ աման,
Շալե շապիկ հագեր է, ու՛յ աման,
Շալե շապիկ հագեր է, ու՛յ աման,
Կարմիր գոտի կապեր է, ու՛յ, ու՛յ, ու՛յ աման,
Փեթկին ետև կայներ է, ու՛յ աման,
Փեթկին ետև կայներ է, ու՛յ աման:

- Պուպլատիկինն ի՞նչ կուզե:

- Կարմիր կովու եղ կուզեմ, ու՛յ, ու՛յ, ու՛յ աման,
  Սև հավու հավկիթ կուզեմ, ու՛յ աման,
  Սև հավու հավկիթ կուզեմ, ու՛յ աման:
  Մեծ պտկեն բլղուր կուզեմ, ու՛յ, ու՛յ, ու՛յ աման,
  Ճերմակ ծովուն ջուր կուզեմ, ու՛յ աման,
  Ճերմակ ծովուն ջուր կուզեմ, ու՛յ աման:

- Յեղ բերեք, պորտին քսեք, ու՛յ, ու՛յ, ու՛յ աման,
  Ջու բերեք, թաթին դնենք, ու՛յ աման,
  Ջու բերեք, թաթին դնենք, ու՛յ աման,
  Փարչեր դրեք մեջ ջրին, ու՛յ, ու՛յ, ու՛յ աման,
  Ջուր բերեք՝ լցնենք գլխին, ու՛յ աման,
  Ջուր բերեք՝ լցնենք գլխին, ու՛յ աման:

- Անձրև, անձրև, գոլ էրա,
  Ցորեն հացը բոլ էրա:

Պուպլատիկինն էկեր է, ու՛յ, ու՛յ, ու՛յ աման,
Շալե շապիկ հագեր է, ու՛յ աման,
Շալե շապիկ հագեր է, ու՛յ աման,
Կարմիր գոտի կապեր է, ու՛յ, ու՛յ, ու՛յ աման,
Փեթկին ետև կայներ է, ու՛յ աման,
Փեթկին ետև կայներ է, ու՛յ աման:

Հանիկ նինար

Կրկնակ.
Հանիկ նինար է, նինար,
Ջանիկ նինար է, նինար,
Ով չթռնա զիդա պար,
Ոտներ կոտրի քիսնա քար:
Ա՛խ, նինար, ջա՛ն, նինար,
Հանիկ նինար է, նինար,
Ջանիկ նինար է, նինար:

- Ախպեր, ախպեր, իմ նխշուն:
- Ի՞նչ իս բարձեր քու իշուն:
- Խունկ, հինա ու աբրշում:
- Վի՞ր կտանիս:
- Բզեզին:
- Բզեզ ետև սարերուն,

Բուրդ կզզե գիլերուն,
Թել կմանե հավքերուն,
Շոր կկարե ճժերուն:

Ա՛խ, նինար, ջա՛ն, նինար,
Հանիկ նինար է, նինար,
Ջանիկ նինար է, նինար:

- Նուրին, նուրին էկեր է,

Շալե շապիկ հագեր է:
Նուրին, Նուրին, ի՞նչ կուզիս:
- Կթան կովուց եղ կուզիմ,

Չալ հավուց հավկիթ կուզիմ,
Երկնքուց ամպեր կուզիմ,
Ամպերուց անձրև կուզիմ,
Որ մեր ուզած տա մեզի,
Անձրև իջնի վըր ձեզի:

Ա՛խ, նինար, ջա՛ն, նինար,

Հանիկ նինար է, նինար,
Ջանիկ նինար է, նինար:

Վեր, հա վեր -վեր

Վեր, հա վեր-վեր, վերիկ է,
Վերն օր ասես՝ էնիկ է,
Վեր, հա վեր-վեր, վերիկ է,
Վերն օր հավնիս՝ էնիկ է:

Աչքեր ունես՝ նրռան հատ,
Վեր, հա վեր-վեր, վերիկ է,
Կապտածաղիկ կըտավհատ,
Վերն, օր ասես էնիկ է,
Էրնեկ թե մերըդ բերեր,
Վեր, հա վեր-վեր, վերիկ է,
Քեզ պես աղջիկ քանիմ հատ,
Վերն օր հավնիս՝ էնիկ է:

Ծաղիկ ես փընջի միջին,
Վեր, հա վեր-վեր, վերիկ է,
Անուշ կաթ՝ սընձի միջին,
Վերն, օր ասես էնիկ է,
Մեղրահամ անուշ կորիզ,
Վեր, հա վեր-վեր, վերիկ է,
Դեղին թուրինջի միջին,
Վերն օր հավնիս՝ էնիկ է:

Արի էրթանք կալերը,
Վեր, հա վեր-վեր, վերիկ է,
Կանչենք անուշ խաղերը,

Վերն, օր ասես էնիկ է,
Արիք խաղանք հարի լուս,
Վեր, հա վեր-վեր, վերիկ է,
Էգվան կէնեն մեզի դուս,
Վերն օր հավնիս՝ էնիկ է:

Կըռունկ ջան, արի, արի

Կըռունկ ջան, արի, արի,
Կըռունկ ծափ տու ու թըռի:

Կըռունկ ձախ թևին արի,
Կըռունկ ծափ տու ու թըռի,
Կըռունկ աջ թևին արի,
Կըռունկ ծափ տու ու թըռի:
Կըռունկ սարերով արի,
Կըռունկ ծափ տու ու թըռի
Գընա արի, ման արի,
Կըռունկ ծափ տու ու թըռի:

Ցոլա ամպերի տակին,
Կըռունկ ծափ տու ու թըռի,
Ծաղիկ - ծառների տակին,
Կըռունկ ծափ տու ու թըռի,
Կըռունկ, գարնան արևին,
Կըռունկ ծափ տու ու թըռի,
Էկար մըտար մեր այգին:
Կըռունկ ծափ տու ու թըռի:

Արևը դարի վըրա,
Կըռունկ ծափ տու ու թըռի,
Մամուռը քարի վըրա,
Կըռունկ ծափ տու ու թըռի,
Էրկու կըռունկ եմ տեսել,
Կըռունկ ծափ տու ու թըռի,
Արագած սարի վըրա,
Կըռունկ ծափ տու ու թըռի:

Մանդրիկ թփիկ ըռեհան

Մանդրիկ թփիկ ըռեհան,
Էլնինք սարերը սեյրան.
Հոպ-հոպ, նախըրչու տղա,
Քաշվի, նախըրչու տղա:

Էլնինք սարերը արոտ,
Հոպ-հոպ, նախըրչու տղա,
Տեսնենք՝ ում քուրն է խորոտ,
Հոպ-հոպ, նախըրչու տղա,
Քաշվի, նախըրչու տղա:

Օսկին ճակտիս շարել եմ,
Հոպ-հոպ, նախըրչու տղա,
Վարդ ու մեխակ ճարել եմ,
Հոպ-հոպ, նախըրչու տղա,
Քաշվի, նախըրչու տղա:

Սարեր, ձորեր ման արի,
Հոպ-հոպ, նախըրչու տղա,
Արևի հետ տուն արի,
Հոպ-հոպ, նախըրչու տղա,
Քաշվի, նախըրչու տղա:

Փափուռի

Նանայ, նանայ, փափուռի,
Նանայ, նանայ, փափուռի,
Փափուռի ջան, փափուռի,
Փափուռի ջան, փափուռի:

Ջուր է գալիս էն սարից,
Նանայ, նանայ, փափուռի,
Կաթում է մարմար քարից,
Նանայ, նանայ, փափուռի:

Արև ելավ էն սարից,
Նանայ, նանայ, փափուռի,
Կաքավ կանչեց էն քարից,
Նանայ, նանայ, փափուռի:

Խնձոր ես ծառի վրա,
Նանայ, նանայ, փափուռի,
Ծաղիկ ես սարի վրա,
Նանայ, նանայ, փափուռի:

Անուշ տաղ ասող բլբուլ,
Նանայ, նանայ, փափուռի,
Կանգնել ես քարի վրա,
Նանայ, նանայ, փափուռի:

Մտա բլբուլի բաղը,
Նանայ, նանայ, փափուռի,
Երգեցի անուշ տաղը,
Նանայ, նանայ, փափուռի:

Նանայ, նանայ, փափուռի,
Նանայ, նանայ, փափուռի,
Փափուռի ջան, փափուռի,
Փափուռի ջան, փափուռի:

Հո՛պ, թռի

Կրկնակ.
Հո՛պ, թռի, հո՛պ, հո՛պ, թռի,
Հայկո ջան,
Շուտ թռի, շախով թռի,
Վարսո ջան:

Խնձոր ես ծառի վրա,
Հայկո ջան,
Ծաղիկ ես սարի վրա,
Վարսո ջան.
Հո՛պ, թռի, հո՛պ, հո՛պ, թռի, Հայկո ջան,
Շուտ թռի, շախով թռի, Վարսո ջան:

Անուշ տաղ ասող կաքավ,
Հայկո ջան,
Կանգնել ես քարի վրա,
Վարսո ջան.

Հո՛պ, թռի, հո՛պ, հո՛պ, թռի, Հայկո ջան,
Շուտ թռի, շախով թռի, Վարսո ջան:

Ախպեր ունեմ՝ գառնարած,
Հայկո ջան,
Պարի միջին շվարած,
Վարսո ջան,
Հո՛պ, թռի, հո՛պ, հո՛պ, թռի, Հայկո ջան,
Շուտ թռի, շախով թռի, Վարսո ջան: